Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արարատի մարզի <<Ղուկասավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի անգլերենի (5 դասաժամ), երաժշտության (4 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փատաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **փետրվարի 7-ից մինչև փետրվարի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 – ից 15:00-ը,** բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 24-ին՝ ժամը 15:00-ին,** Արարատի մարզի Ղուկասավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Ղուկասավան, Արամի փողոց 39:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /093/ 05-04-61/ հեռախոսահամարով: